



29. ԱՂՎԻՍ ԵՎ ՄԱՐՏ

Կեր, չկեր մարտըն կեր, ուր կնիկ: Մարտ կերթա վար կանը, յուր չանթեն խացն էլ գո վարը կուշտ, աղվիս կը գա, կառնը ըզխաց, կը յա:

Մարտ կիյնի խատ տաւ, կան կը գա, կերթա ծառի՛մ տակ, կը տեսնա՝ գո աքիս ծառ վե, համա կը հագտըֆը ծառ կըտորը:

Աքիս համա կըսը. - Տաւ իմ տուն ավրողն իս, ուր իմ տուն տ'ավրիս, գո ան աղվիսն ը քաւ չանթեն տարիր, քաւ խացիր կուտը:

Մարտն էլ կը վազը, կերթա մա աղվիս, ուր գաղվիս բըռնը, աղվիսն էլ կըսը. - Աղուրթ իսնը ախմախկութին. իս քաւ չանթեն բերողն իմ, ըզի կանիս քաւ գող:

Ան էլ կըսը. - Չէ՛, աքիս ծի էսաց՝ աղվիսն ը տարիր:

Աղվիսն էլ կըսը. - Աստված քաւ տուն ավրը, ան անցկուն կանը, ուր տաւ անու ուսկիք չըկընդընիս, անու տուն ավրիս: Անու շատ ուսկը կա, գըռնա՛, անու վառը, ուսկիք առ՛, արը:

Ան էլ համա լազըմ կը գա, ըզկացին, ըզնավթ տընեն կառնը, կը գա, ըզծառ կը կըտորը, նավթ կը տա վուռուն, անու մըզիս կը խանը տաւ, կիրիշկի կը ինը՝ խարիր ուսկը գո հատե, ատու տան մեջ:

Մարտըն էլ կառնը գատ խարիր ուսկին, կը գա, կը գա ուր տուն, ուր կընկան կըսը. - Ահդ իլնը, իս աղեկութին անիմ խա աղվըսկուն:

Կիլնը, կիյնը հիտիվ աղվըսուն, կըսը. - Մըհա հո՞ւր տը կընդընիմ:

Կան կը գա՛, կան կը գա՛, զաղվիս կը կընդընը, կըսը. - Աղվիս ախպեր, արը՝

Աղվիսն էլ կըսը. - Աստված քու տուն ավրը, անպա իս ավիր իմ, իս միամիտ հայվան իմ, իմ սերտ ցե թու պա՛ն չըկա:

Ան էլ աղվըսկուն կըսը. - Քու մըրազ արա, իս քու մըրազ կատարիմ:

Ան էլ կըսը. - Իմ մըրազ նա յը՝ օրե ճուռըմ միս տու, իս ուտիմ:

Մարտն էլ կըսը. - Չէ՛, ուրլա՛, համեն օր ճուռըմ միս շատ ը, քանը իմ կնիկ չուրթան տըրուրը, իս չուրթան տամ, տա՛ւ ուտիս:

Աղվիս կըսը. - Չէ՛, ուրլա՛, վըրե՞, չէ՞ իս քու շիրիքն իմ, կես զիմն ը, կես՝ քուն:

Մարտն էլ կըսը. - Չէ՛, իս չը՛մ իտա քյի:

Աղվիսն էլ կըսը. - Է՛յ, իս ճապով հայվան իմ, ծյի կըսին աղվիս, ծի աճուն կա:

Մարտն էլ կըսը. - Համեն խըլիսուն արը, քու ճուռ միս ա՛ռ, տա՛ր, իս քու մոտեն պըրծընիմ:

Ան էլ համեն խըլիսուն կը գա՛, ուր ճուռ միս կառնը, կը յա:

Ան մեկ օր միս կը մընա պակաս, կը մոռնա, չըբիրը, աղվիս կը գա՛, կըսը. - Մա՛րտ, հո՞ւր ը իմ միս:

Մարտն էլ կըսը. - Հասօր միս չըկա, գյընա՛, խըլիսուն արը՝

Աղվիսն էլ կըսը. - Ապա իս ի՞նչ ուտիմ ընթրիս:

Մարտըն էլ կըսը. - Իս կըրակըմ էնգա՛ քու ծեռ, հասօր չըկա, տունեն անվրա, խըլիսուն արը, էրկու ճուռ տամ: Վըրե՞ ինչ տ՛իլնը:

Աղվիսն էլ համա՛ կը ռըկը, կիլնը, կը թըղնը, կը յա:

Կըսը. - Ահդ իլնը, ալ իս չըթըղնիմ քու խամար:

Աղվիսն էլ կը գա՛, փանջարեն վե ըզինք կը թալը մա տան: Համա՛ կը խասնը, դըկու վիզ կը բըռնը:

Դիկըն էլ կըսը. - Աստված քու տուն ավրը, տա՛ւ ըզի տը բըռնիս ի՞նչ, ֆարազա տամ ըզի, կերար, քու աչք տի վա՛ր իմ աղը կընկան: Խապը՛, ա՛ռ:

Աղվիս կըսը. - Դի՛կ, կիլնը՞, անցկում պա՛ն քու մոտեն կը գա՛:

Դիկ կըսը. - Համեն խըլիսու արը, քու պուչ շանք տո՛ւ, գյընա՛, ալ քի տա՛վը չըկա խիտ:

Աղվիսն էլ սովորավ, համեն խըլիսուն կը գա, ուր պուչ փան-
ջարեն վե շանք կը տա, կը յա:

Կնիկ դըկուն կը խարցնը, կըսը. - Նա ի՞նչ ը՝ համեն խըլիսու
վար մի փանջարին կերևա, էմել կը կուրսը:

Դիկըն էլ կըսը. - Ան թագա՛վորը լաճն ը:

Կնիկ կըսը. - Ապա ի՞նչըխ տ'իլնը՝ իս գան տեսնամ:

Դիկըն էլ կըսը. - Առավոտուն քյի հենք կը պը, իս կան-
ջիմ, ան գա:

Կը մընա խըլիսուն, դիկ կը կանջը, աղվիս կը գա, կնիկն էլ
կիրիշկը, կըխը՝ աղվիսն ը:

Դըկուն կըսը. - Տա՛ անխուզը, չէ՞ տալ կըսեր՝ թագա՛վորը
լաճն ը, մա սարը հայվան պիրի, իս ի՞նչ տ'անիմ:

Դիկըն էլ կըսը. - Իս իմ հախուն անցկում արը: Դորիս քանը
ուր տալ անու միս կըտրիցիք, իս անցկում արը, ուր ըզի չուտեր:

Կնիկն էլ կը վազը մա ուր իրիկ:

Կըսը. - Լա՛գ արը, մա ջանավար ծենե չըտա՛տարը:

Մարտն էլ համա՛ ըզփետ կառնը, կը գա թա՛ղ աղվիս:

Աղվիսն էլ կըսը. - Մա՛րտ, տալ ի՞նչ տ'անիս:

Ան էլ կըսը. - Իմ տընեն ինկը՝ տուս, քա՛ սերտ չար ը:

Հա՛դե կը կըռվին, կը գարկը աղվըսկուն:

Աղվիս կըսը. - Ան օր, ինչ իս քյի ուսկը կը պիրեր, անուշ էր,
աւ օր, ինչ ուսկը չըկա, ըզի քա՛ տընեն կը թա՛ղկիս: Իս անցկում
պատիժըմ տը տամ քյի, ուըրտա՛ տալ փըշուր չագա՛տվիս:

Աղվիս էլ կը ռըկը, կը յա:

Կերթա, կը պառկը Ամբըրը տան տակ, Ամբըրեն էլ էլավ,
գյընաց, ճա՛ւր տը խըմը, կը խը՝ աղվիս գա՛ հա՛դե: Կը խասնը,
գաղվիս կը բըռնը:

Կըսը. - Տանիմ, անիմ ծի քուրք:

Աղվիսն էլ կըսը. - Ամբըրա՛, ըզի թուղ, իս քի խարիր ուսկը
շանք տը տամ: Տա՛ աղեկ մարտ իս:

Ամբըրեն գան աղվիս կը թըղնը, կըսը. - Ուր տա տա՛ անց-
կուն բախտուն հայվա մ'իս, գյընա՛, ան ուսկիք ա՛ռ, պի՛:

Աղվիս կըսը. - Մարտըմ տի խա՛ ծի, իս շանք տամ, թըխ ան
բիրը:

Ամբըրեն ըզխուլամ կը տընը խիտ, խընդրաց կը յան:

Աղվիս գնն կառնը, կը պիրը մն ան խիրկին, ըզուր մըկան բուն շանք իտու, էսաց. - Գո ըստա յը, խա՛ն:

Ան էլ կը փուրը, կը փուրը, խարիր ուսկը կը կընդընը: Կառնը, կը գն մն Ամբըրեն: Ամբըրեն կը հիրհոկը, զաղվիս կը կընդընը, կառնը, կը բիրը:

Աղվիս կը գն հանդե, կըսը. - Իմ մըրազ էն ը՝ զիմ տնտնտնտան նըհան մարտուն կըտրիս:

Ամբըրեն կը հիրհոկը, ըզմարտ կը պիրը:

Մարտ կըսը. - Ամբըրա՛, տու ըզի պիրիր ի՞նչ:

Կըսը. - Իս ըզքի պիրիր իմ, տու մն հայվընը մոտեն փարեն առիր իս, կիրիր իս, վըրե՞ մըկա գնն կը խանիս տուս:

Մարտ կըսը. - Իս միամիտ գնցեր էր, վնր կաներ, իմ խաց տըրեր էր հանդե, կուրավ: Իս էլ մընացը անուքը, էլն խն տնվսին կան հիտ: Խն տնվսին գնցը, մն ֆըլան ծառը տակ կը տեսնամ՝ աքիս իլիր ծառ վե: Իս ծառ տը կըտրեր, աքիս էսաց. «Իմ ծառ մը կըտրը, քու գող ուր կա՝ աղվիսն ը: Իս խնպար չիմ: Գո ան քարը տակ»: Ինչ էսաց, իս էլ էլն գնցը մն աղվիս, աղվըսուն սիցը, թե՛ ո՞ւր ը իմ չանթա խաց: Աղվիս էսաց, թե՛ աքիսն ը տարիր, իս խնպար չիմ: Իս էլ սիցը՝ չէ՛, աքիս կըսը՝ աղվիս տարիր: Աղվիսն էլ էսաց. «Տն Աստված, քու տուն ավըր, անու խըզինա կա, անցկում կանը, ուր տու անու ծառ չըկըտրիս, անու ուսկիք խանիս տուս»: Իս էլ գնցը, ըզծառ կըտրիցը, կիրիշկիմ, կը խիմ՝ խարիր ուսկը գո ծառը տակ, իս էլ առը, բիրը: Սիցը ռըհնա տոտիմ, իս սըցը՝ աղվիս խիղճ ը, սիցը՝ քու մըրազ արա, աղվիսն էլ էսաց, թի՛ իմ մըրազ էն ը, օր ճուռըմ միս տու տաս, իս ուտիմ, իս էլ սիցը՝ չէ՛, ճուռըմ միս շատ ը, ինչ մի չուրթան տըրուրը, բըռըմ տա քի: Աղվիսն էլ էսաց. «Չէ՛, խարիր ուսկը էր, օր ճուռըմ միս տաս ձի, տնլ քիչ ը, իս, տու շիրիք ինք»: Իս էլ սիցը՝ հանեն օր քու ճուռ միս տար: Ան էլ հանեն խըլիսուն կը գեր, ուր ճուռ միս կառներ, կը յեր: Ան մեկ օր չէլավ՝ իս տեր, աղվիս իրը, ուր միս ուզից, իս սիցը՝ խըլիսուն տամ, ան էլ էսաց՝ չէ՛, մըկա տը տաս: Իս սիցը՝ չըկա: Աղվիսն էլ էլավ, հըռըկավ, գըննաց, հանա խասավ, զիմ դիկ բըռնից, ըզդիկ տոտեր, ան էլ ուր հախուն կըսը՝ ֆարնազ ըզի կերար, ի՞նչ ֆայդն, զիմ աղը կնիկ ուզը, ուր տն իլնը քու յար, ուտիս, խըմիս, քի քեֆ անիս: Աղվիսըն էլ ճնպով հայվա մ՛էր, հանեն խըլիսուն իմ կընկան ուր պուչ շանք կը տեր,

իմ կնիկ էլ՝ դըկուն կըսը՝ մա ի՞նչ ը, ան էլ կըսը՝ թագաւորը լաճն ը, իկիր ըզքի հապովը, ուր ըզքի բըռնը ուր յար: Կընկան աղկը կիյնը, չուր խըլիսուն ինչ կը գա՛, կը խը՝ աղվիսն ը, կնիկըս կը գա՛, ծի կըսա կանը, իս էլ գացը, գաղվիս տըփիցը, խանիցը տուս, հալ-քեֆյաթ մա յը:

Ամբըրեն կըսը. - Մա՛րտ, տաւ քաւ Աստված, ան խաց հուստո՞ւց էր, ուր պիրի իս քի, մա ան առտին չէլավ քի կուըսմաթ:

Ան էլ կըսը. - Ուըլա՛, իմ կնիկ իալը:

Կը հարողկին, ըզկնիկ կը պիրին:

Ամբըրեն անու կըսը. - Կնի՛կ, ան խաց հուստո՞ւց էր, ընչ տաւ տարար քաւ իրկան:

Ան էլ կըսը. - Ուըլա՛, տաւ իմ վիզ գարկիս, չըգարկիս, ան խաց իս գացը, մի տըրկըցը տընեն կողցա, առը, պիրը, տարա իմ իրկան:

Ամբըրեն կըսը. - Մա՛րտ, տաւ չը՞ս գինա՛՝ խարամ մալ հըմեն մարտ չըկանա ուտը, խաց վար քի խարամավ, փարեն էլ վար քի չըխտ խարամ էր:

Դիրիս աղվըսկուն կըսը. - Ան խաց արիր քաւ կուըսմաթ, ան Աստվածն ը արիր, չուր գա դիկըն էլ վար անու խըյանաթացավ:

Կը հարողկը, դիկ կը բիրը, կը գինը, կը թալը հիրճիկ աղվըսկուն: Ըզմարտ, ըզկնիկ կը տա կախիլ. աղվիս պարգիրիս կիլնը տաւ:

Կը կանչը, կըսը. - Ամբըրա՛, Ամբըրա՛, տաւ էլ քանափուկ կերող իս: Յան չըխտ տաւ աթարզ տանտանտան կըտրող չէր:

Աղվիս էլ կիլնը, ուշիկ-ուշիկըմ կը յա ուր տուն: Անունը խասան ուրինց մըրագին, տաւք էլ՝ ծյի մըրագին:

